ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

03. 05. 2024 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի խորհրդի 19 անդամ:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից Կառույցների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար ֆակուլտետից 2 ներկայացուցչի (1-ը՝ վարչական կազմից, 1-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմից) ընտրության հարցը (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգային հարցի մասին Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի կողմից 2024 թ. ապրիլի 19-ին իջեցված շրջաբերականի համաձայն՝ անհրաժեշտ էր մինչև ս.թ. մայիսի 4-ը ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից Կառույցների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար ֆակուլտետի կողմից ընտրված 2 ներկայացուցիչ (1-ը՝ վարչական կազմից, 1-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմից): Ֆակուլտետի ներկայացուցիչները, ըստ շրջաբերականի, պետք է ընտրվեին ֆակուլտետի գիտական խորհրդում:

Վարչական կազմից ընտրության համար ներկայացվել էին ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կարինե Պողոսյանի և փոխդեկան Վահագն Չոբանյանի թեկնածությունները: Պրոֆեսորադախոսական կազմից ամբիոնները ներկայացրել էին հետևյալ թեկնածությունները.

1. Վաչագան Ավագյան (Հայոց լեզվի և գրականության ամբիոն)
2. Աիդա Սարհատյան (Հայոց լեզվի և գրականության ամբիոն)

3. Լիանա Հարությունյան (Մանկավարժության և հոգեբանության ամբիոն)
4. Աննա Սարգսյան (Օտար լեզուների ամբիոն)
5. Նաթելլա Գրիգորյան (Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն)
6. Վլադիմիր Պողոսյան (Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն)

Կազմակերպվել է ընտրություն, և անցկացվել քվեարկություն, որին մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի 19 անդամ: Ելնելով քվեարկության արդյունքներից՝ յուրաքանչյուր կազմից առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն պետք է ներկայացվեր տնօրենի հաստատմանը:

Քվեարկության արդյունքների համաձայն՝ ֆակուլտետի վարչական կազմից առավելագույն ձայներ է հավաքել Կարինե Պողոսյանը (16 ձայն), պրոֆեսորադասախոսական կազմից՝ Վաչագան Ավագյանը (10 ձայն), որոնց թեկնածությունները կներկայացվեն տնօրենի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Հարությունյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Աղուզումցյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից Կառույցների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից ընտրված 2 ներկայացուցչի թեկնածություններն ուղարկել տնօրենի հաստատմանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Վանյան